

զոր թէ՛ ես հաւաքած եմ եւ թէ՛ այլոց կողմէ ի լոյս ընծայածներէ քաղած եմ) :

* * *

ԸՆԴՕՐԻՆԱԿՈՂՆԵՐ

Մեզ աւելի շատ ծանօթ են ընդօրինակողներու քան իսկական հեղինակներու անուններ :

Երբ տաղանդը գոյութիւն ունեցեր է զործողներու մօտ, հոգեւորական կամ աշխարհական ըլլալու հանդամանքը առանձին ակներեւ զեր խաղացած չէ զործի կատարելութեան մէջ : Սարգիս Պիծակի, Ստեփաննոս քահանայի կողքին աշխարհական Թորոս Ռոսլին, Թորոս Տարօնեցին դուրս են եկած ամենամեծ արժանիքով վարպետներ :

* * *

ԱՐՈՒԵՍԱԳԷՏԸ ՎԱՆՔԻՆ ՄԷՉ

Ի բնէ կոչումով թէ հաշուով, կեցութեան հանդամանքէն մղուած, վանք մտնողը, էպէս ենթարկուող մարդ, մղուեր է դիր ու գրչութեամբ զբաղուելու արուեստին : Մենաստանի միապաղպղ կեանքին մէջ, ձանձրոյթն սպանելու համար, արդարեւ հոգեւորականին համար լուսադոյն ժամանցի պարապմունք էր այդ :

*

Մեր գրիչներու (զայլիկոաֆներ) եւ պատկերազարդող նկարիչներու իննսուն տոկոսը ընդօրինակողներ են, ինչ որ կը նշանակէ՝ արուեստագէտի խմորը չունեցող սովորական մարդիկ, կամ արուեստի բանուորներ միայն :

Ընդօրինակողը անհատնում համբերութեամբ արտադրեր է աստուածաշունչ մը, աւետարան մը, ճառընտիր մը, սաղմոս մը, յայտնաբերած մը. իսկ իրեն պէս ուրիշ մը, վանքի մէջ ՚ի Քրիստոս եղբայրացած մէկ այլը, պատկերազարդեր է զրջագիր հատորը :

Վանք մտած մարդիկ, ամբողջովին հրաժարած ազատութիւն ըսուած բանէն, հարիւրին իննսուն տոկոսով տուած են մտքէ եւ ըստեղծագործական թափէ զուրկ պատկերազարդութիւն մը : Համբերութեան մարզանքի համար հնարուած այս կարգի գործերու մէջ շատ քիչերը շահեկանութիւն կը ներկայացնեն : Աստուծոյ մէջ մենք չենք զգար երկունքներու տաղ-

նապն ապրող արուեստագէտի հոգու փոթորկումները, սրտի բռնկումներ :

Առհասարակ միջնադարեան վանքը, սկիզբէն ի վեր, Աստուծոյ նուիրուած մարդոց խորհողական կարողութիւնը աշխատեր է կուտել : Այս պատճառով ալ ասոնցմէ շատեր մնացեր են հոգեկան ներքիններ՝ որ անընդունակ են մտաւոր ապրումներու :

«Նրեւիլ», «Նիկատի առնուիլ» ուղելու պէս «մեղսալիլ» ցանկութիւններէ՝ դեռ վանք մտնելը որոշած օր հրաժարած եւ միայն աստուածահաճոյ աղօթքի նուիրուած այս մարդոց մէջ եղած են սակայն ի բնէ արուեստագէտ մարդիկ, որոնք, անկարող զսպելու իրենց մէջ շարունակ արտայայտուելու ուզող «նեքիմ մարդը», տուեր են մեզ ոգեւորիչ գործեր, ճշմարիտ ստեղծագործութիւններ են :

Հայ գրքին եւ անոր գեղարուեստին ծառայող վարպետներ իրենց անունները գետեղած են յիշեալ 20,000 զրջագիրներու կից յիշատակարաններու մէկ անկիւնը՝ գրիչ, նկարիչ, ոսկող, կազմող մակդիրներով :

* * *

ՎԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Գրչագիրները գեղազրոյղ եւ նկարազարդող հայ արուեստագէտներ իրենց անունները անարգանօք յիշատակած են, ոչ թէ հռչակի ծարաւէն մղուած, այլ «աստուածահաճոյ» գործ մը զլուխ բերելու երկարատեւ տաժանքը «հրեշտակային», «քրիստոսալայիլ» համբերողութեամբ տարած ըլլալու օրինակը տալու մը տահոգութեամբ :

Անոնք հաւատացած են, որ «ստացողներ», «լայելող»ներ, իրենց աղօթքներու մէջ կը յիշեն աշխատաւորը եւ ողորմեա մը կամ լուսաւոր արա մը կ'ըսեն իրենց հոգու փրկութեան համար : Եւ բոլորն ալ կը խնդրեն, որ «ստացողներ» ներողամիտ ըլլան աշխատաւորի թեքութիւններուն : Անոնք ինքզինքնին, քրիստոնէական խոնարհամտութեամբ, կը կոչեն հետեւեալ անականներով

Անարուեստ, անխմատ, անհմուտ, անպիտան, թերալարժ, բթամիտ, ապիկար, գառամեալ, խաւարամիտ, սխալամիտ, ողորմելի, նուստտ, հէգ, վատթար, ստանուն, փրծուն, փցնամիտ, ցոփ, փանաքի, տրուպ,